




ԵՐՐՈՐԴ ՏՍՐԻ

ԹԻԻ 95

17 ՄԱՅԻՍ 1913

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹՆԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ

րոս Առաքեալն ուղղած՝ «Եւ դու երբեմն դարձցիս եւ հաստատեցես զեղբարս քո» խօսքը յառաջ բերած ատեն, դարձցիս բառը յապաւեր է։ Ասոր պատասխանը չէ որ հոս զմեզ կը զբաղեցնէ։ Վասնզի Ս. Հարց և և Վարդապետաց կողմանէ ընկալեալ սովորութիւն մըն է որով կարելի է Ս. Գրքէն մէջբերումներ ընել նաեւ այն բառերով միայն՝ որոնք ձեռնարկուած նիւթը հաստատելու կը ծառայեն։ Ուստի խժըժանքը արժէք չունի։ Սակայն մենք կը յիշենք զայս՝ անոր համար որ յօդուածագիրը ասոր պատճառը ուզելով նշանակել, հաւատքի դէմ մոլորութիւն մը կը նետէ մէջտեղ՝ Առաքելապետին, և հետեւաբար՝ անոր Յաջորդներուն, Քահանայապետաց անսխալութեան դէմ։ Կ'ըսէ. «Դարձցիս կը զեղչուի, վասնզի այն բառը կը ՎՏԱՆԴԷ Պետրոսի անսխալութիւնը»։ — Ուրեմն Պետրոս և իր Յաջորդները անսխալ չեն. ահա հերետիկոսութիւն մը։

2. Եօդուածագիրը Հռոմայ Ս. Եկեղեցիէն արգիլեալ գրքի մը ընթերցումը յանձնարարելէն վերջ, կը յարէ սա պարբերութիւնը. «Այս գիրքը կարելի է որ Հռոմէն արգիլեալ է, (քս ուրում Հռոմայ սովորութիւնն է հեմարսութիւնը երեւան հանող գիրքերը անսխալապէս Indexի մէջ անցընել)»։ — Ուրեմն Հռոմ գէշ գիրքերուն ընթերցումին արգելք դնելով, ո՛չ թէ մոլորութիւնն ու մոլորութիւնը արգիլած կ'ըլլայ, այլ յատկապէս հեմարսութիւնը կ'արգելու, և այն՝ սովորութեամբ. ուրեմն Հռոմ մոլորեալ է. ահա հերետիկոսութիւն մըն ալ։

3. Եկեղեցիներու վրայ խօսելով, յօդուածագիրը կ'ըսէ թէ «Անոնց տէրը Ազգն է, անոնք Գերդուրիւն ծախելով շինուած չեն»։ — Ուրեմն Հռոմէական Եկեղեցին ներողութիւն ԾԱՆՆԵԼՈՎ Եկեղեցիներ կը չինէ. ահա՛ ուրիշ հերետիկոսութիւն մը։ — Մոլորական է նոյնպէս ըսել բացարձակօրէն թէ՛ Եկեղեցիներու տէրը ազգն է։

4. Կ'ըսէ թէ Թաղականները «Պարտաւոր են հսկելու քահանայից վրայ որ անոնց բոլորում արարողութեան չեղիկն»։ — Ուրեմն աշխարհականաց կը արուի Եպիսկոպոսական

իշխանութիւն և իրաւասութիւն. ա՛ս ալ հերետիկոսութիւն է։

5. Մինողի նկատմամբ մեծամեծ սխալներ կը գրէ յօդուածագիրը. այնքան մոլորութիւն որքան խօսք։

Ա. Կ'ըսէ թէ՛ «Մինողը օտար երկրի մէջ գումարուեցաւ»։ — Նախ՝ անհասկանալի է թէ ի՞նչ յանցանք է այդ. Երկրորդ՝ Հռոմ, Ս. Քահանայապետին Հռոմը ինչէ՞ն օՏԱՐ երկիր է Կաթողիկէ Մինողի մը համար. Երրորդ՝ ի՞նչ վնաս կրեցին ուրիշ Կաթողիկէ Հասարակութիւնք որոնք իրապէս Մինող գումարեցին ի Հռոմ։

Բ. Կ'ըսէ թէ՛ «Պատասխանատու է Մինողը, որ մերժելով Թէրզեանի կրաւորական ձայնէ հրաժարուած, ընտրեց զինքը ի յարգանս ժողովրդեան»։ — Որո՞ւ պատասխանատու է Մինողը... Խնչու պատասխանատու է, իր ընտրական իրաւանց գործածութեան համար... Եւ ի՞նչ պատճառաւ հիմա կը չեղտեն զայդ, և զողացին, չգիտեցին ընտրութեան ժամանակ։

Գ. Կ'ըսէ թէ՛ «Մինողը հին Հայրապետաց պէս նոր եկեղեցական բարեկարգութիւն ընելու իշխանութիւն ՉՈՒՆԻ. վասնզի հին Հայրապետք ազատ էին, ուրիշէն կախում չունէին. ուրիշին ազգեցութեան ներքեւ չէին գործեր. եւ իրենց որոշողութիւններուն գործադրութեան համար Հռոմայ հաստատութեան չէին սպասեր. այլ իրենց որոշողութիւնները՝ «Զոր ինչ գրեցի՝ գրեցի» էին»։ — Ահա՛ յօդուածագիրը՝ նախ, իբր դատաւոր կը վճռէ և կը դատապարտէ Մինողը. երկրորդ կը պահանջէ այնպիսի Մինող մը որ ազատ ըլլայ, անկախ ըլլայ ՌԻՐԻՇԷՆ, այսինքն Հռոմի Ս. Քահանայապետէն, որոշողութիւններ տայ, որոնց ո՛չ թէ միայն հաստատութիւն տալու, այլ և ո՛չ իսկ դիտողութիւն ընելու իշխանութիւն չունենայ Հռոմ. այսինքն՝ ըսել կ'ուզէ որ Մինողը Կաթողիկէ ըլլայ։

Դ. Կը պահանջէ նոյնպէս որ Մինողը Ազգին հետ համեմատելի գործէ. օւշաբեմականներ ալ զսնուլն անոր մէջ. — Կ'ուզէ Մինող մը հակականոնական։

Ե. Կ'աւաղէ՝ ու կ'ըսէ. «Ինչ կը սպասուի ալ Սինոդէն որ զինքը խարդաւանած Թէր-զեանը այսօր կը պաշտէ իբրեւ Նուիրապետ»։ — Կ'ուզէ Սինոդ մը՝ ըմբոստ՝ Բահանայապետական վճիռներու դէմ։ — Եւ խարդաւանահճ՝ ձրի զրպարտութիւն։

Զ. Կ'ըսէ. «Ինչ կը սպասուի ալ Նպիսկոպոսներէն որ իրենց բարձր պաշտօնին գիտակցութիւնը չունին»։ — Արհամարհանք՝ բոլոր Նպիսկոպոսաց դէմ՝ անխտիր։

Է. Կ'ըսէ. Նպիսկոպոսներն ստորագրեցին «Ստութեամբ և խարդախութեամբ և աներեւակայելի խեղաթիւրումներով լի գրութիւն մը»։ Կը հանդիսանայ գերագոյն զատուոր Նպիսկոպոսաց. կ'անարգէ զանոնք իբր՝ սա-խօս, խարզախ և խեղաթիւրիչ։

Ը. Կ'ըսէ. «Զէինք գիտեր երբեք որ Հոգւով Սրբով առլցեալ Սինոդէ մը այսպիսի դժոխային վճիռներ կ'ելլեն»։ — Դժ-ՈՒՍՈՒՅԻՆ!!.. Կ'ըսէ, կ'ըսէ, կ'ըսէ!...

Թ. Յօդուածագիրը ուրիշ պատգամ մըն ալ կու տայ. «Ազգը զինքը (զԹէրզեան) Թէ՛ իբրեւ Կիլիկիոյ Պատրիարք և Թէ՛ իբրեւ Ազգապետ Պատրիարք ընտրած էք. մէկուն ջընջուելովը՝ միւսն ալ կը ջնջուի»։ — Ուրեմն կը վճռէ Թէ՛ ԸՆՏՐՈՂԱզգն է. Թէ՛ ազգապետն ալ Պատրիարք է՝ և ոչ Բարբիդ. Թէ՛ մէկուն ջնջուելովը միւսն ալ կը ջնջուի. այսինքն Թէ՛ Հոգեւոր Պետիւն իշխանութիւնը և ճոխութիւնը պարզապէս կախում ունի ուր եւ իցի կառավարութեան մը ուր եւ իցի որոշումէն, ի հեճուկս Եկեղեցական բացալայտ և դարաւոր կանոններուն, ի հեճուկս Ս. Բահանայապետին բացարձակ որոշողութիւններուն, ի հեճուկս նոյն ինքն Կառավարութեան որ կը յայտարարէ Թէ՛ ինք իշխանութիւն չունի Հոգեւոր Պետի վրայ։

Դ. Կ'ըսէ. «Թէրզեան չյապաղեցաւ պատիժներ սպառնալ»։ — Այսինքն՝ անգիտամալ և մէկզի դնել կ'ուզէ զՀոգով, որ հոգեւորական պատիժներ սպառնացաւ ու տուաւ։

Ե. Դեռ ո՞ր մէկը համբմ, մեկ յօդուածի մէջ խճողուած թխմուած մոլորական խօսքերուն։ Արատուլոր պատկերներ կ'ըսէ, անշուշտ ակնարկելով Զարչարանաց և Ս. Սրտի

պատկերներուն։ — Կ'ուզէ որ պատկերներու դատաստանն ալ աշխարհականներէ վճռուի։

— Զեռնադրուած Եպիսկոպոս մէջ վաճախան մը չգտնուիլը կը կոչէ՝ առակալի յուսախաբուրիւն, հակաքրիստոնէայ ասելութիւն. «Վանականները՝ կ'ըսէ, ժողովրդեան հետ չէին գտնուիր, գիտէին հոգիները սիրաշահելուն կերպը, իրենց խնամոց յանձնուած հօտք իբրեւ հայր կը կառավարէին և ոչ Թէ տիրելով վիճակաց»։ — Այսպիսի յօդուածի մը մէջ անտեղի և անպատիւ (déplacé) գովասանքներ, հակադրուած՝ օրինաւոր Նուիրապետութեան դէմ շռայլուած անարգանքներու։ — «Կղերը մեծաւ մասամբ կեղծաւոր» կը կոչէ։ — Եկեղեցաց մէջ գործուած սրբապղծութիւններն ալ Հոգեւոր Իշխանութեան կը վերագրէ։

Դեռ... ձանձրախալու բան. հարկ պիտի ըլլաք այդ դժբախտ յօդուածը նոյնութեամբ ընդօրինակել։

Ա՛լ զաղբիւրք, ուրեմն։

Դիտել պէտք է սակայն Թէ Մեհմուտ կը հաւատայ Թէ. «Այս յօդուածը Կաթողիկէ Աստուածաբանն մը կողմանէ գրուած է»։

Աստուածաբան... .

Կաթողիկէ... .

Անպատճառ Մեհմուտի պէս Կաթողիկէ, և Մեհմուտի մատաղապար Աստուածաբան։

«Ոչ ամենեւեան՝ որ յիսրայէլէն են, նոքա Իսրայէլեանք իցին»։

«Այնպիսիքն սուտ առաքեալք, մշակք նենդաւորք, կերպարանին ի կերպարանս առաքելոց Բրիտոսի, Եւ չեն ինչ զարմանք. և ինքն սատանայ կեքպարանի ի հրեշտակ լուսոյ»։

Եթէ զգէս են, ինչ լիանդգնութեամբ կը գրեն։

Եթէ չեն հաւատար, ինչ գործ ունին Կաթողիկէ Եկեղեցւոյ Կանոններուն և Կաթողիկէ Հասարակութեան մը վարչութեան հետ։

Մ Ա Լ Թ Ա Յ Ի

ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

(Շար.)

Բացման օրը Քահանայապետական պատուիրակ Վսեմ. Կարգ. Ֆերրադա գեղեցիկ և ուշագրաւ ճառ մը խօսեցաւ: Բնաբան ընտրած էր Պօղոս Առաքելոյն Ս. Հաղորդութեան հաստատութեան վերաբերեալ խօսքերը (Ա. Կոր. ԺԱ. 23, 24), այն Առաքելոյն՝ որուն սիրտը սիրով ա՛յնքան բորբոքած էր, որ Ս. Ոսկերեքան Հայրապետը կըրցաւ ըսել Սիւրս Պօղոսի՝ սիւրս Յիսուսի: Պօղոս առաջին անգամ սուրբ հաւատքը քարոզած էր այս կղզւոյ մէջ և փրկութեան երկընդպարի Զոհ մատուցած (Հմմ. Գործ. ԻԸ.): Բայց Պօղոս, որ Հռոմայեցի քաղաքացւոյ մը խորհրտութեամբ ի կայսր բողոքած էր, Հռոմ կ'երթար՝ Առաքելապետին Պետրոսի յարգանքներ մատուցանելու և անոր հետ բաժնելու՝ Յիսուսի վարդապետութիւնը արեամբ կնքելու ծայրագոյն պատիւը և անոր հետ մինչեւ վերջը տիրելու Յաւիտենական Քաղաքին: Եւ ահա այսօր, Պետրոսի յաջորդը, մեր սիրեցեալ Քահանայապետը՝ Պիոս Ժ. ձեզի կը զրկէ իր Պատուիրակը, իր անունով նախագահելու համար ձեր կղզւոյն մէջ հանդիսապէս կատարուելիք Համաժողովի Ս. Հաղորդութեան. այս երջանիկ օրուան մէջ Հռոմ և Մալթա ձեռք կը կարկառեն իրարու, Հռոմ՝ մայր ամենայն եկեղեցիներու, և Մալթա՝ իր դուստրը: Ապա կը յիշէ Կարգինալը իր առաջին ճամբորդութիւնը դէպի Մալթա. եօթը տարի առաջ, Անարատ Յղացեալ Մարիամու Աստուածամօր Կուսին մէկ արձանին պսակմանը առթիւ, և այն քաղցր յուշերը զորս պահած էր իր սրտին մէջ. հիմա տեսնելով կղզեցիներու եռանդը, մեծամեծ պատրաստութիւնները, քաղաքին հիանալի զարդարանքները, լաւ կը հաւելնայ անոնց խորին և սքանչելի իմաստը. Մարիամը այնպէս պատուելէն վերջը, ուզած են աւելին ընել իր Աստուածորդւոյն համար: Քահպի՝ Մարիամով կ'երբացուի առ Յիսուս:

Մըհնեալ ըլլան իրենք. և օրհնեալ ըլլան աշխարհիս ամէն կողմէ հոն վազող հաւատացեալ ուխտաւորները, որոնք ո՛չ անհատական միայն, այլ հաւաքական ու տիեզերական փառաբանութիւն մը ուզեցին մատուցանել, ինչպէս կը պատշաճի աշխարհիս Ստեղծողին, Թագաւորներու Թագաւորին, մարդկան Փրկագործողին, որ անհուն սիրոյ մղումով ուզեց միշտ մեր մէջ մնալ, Զնեղ որք պիտի չթողում, զմեզ իր անարատ մարմնովը մտուցանել, զմեզ իր աստուածային կեանքովը ապրեցնել:

Այս անհասանելի խորհրդոյն իրականութեանը գրաւական է՝ Աստուծոյ մը յայտնի, վճռական, քայքայեալ խօսքը. Ասիկա իմ մաքմինս է. ասիկա Հաւատոյ խորհուրդն է, որուն մէջ գրեթէ իր Սիրոյն հարսութիւնները քափեց (Ժող. Տրիտ.). և բանականութիւնը կ'երկրպագէ և սիրա՛ր՝ որ անհունին ծարաւի է, կը զգայ անոր խորհրդաւոր բոցը, անբիծ քաղցրութիւնները, անպատում սքանչելիքը: Ասոր համար է որ Ս. Հաղորդութիւնը եղաւ միշտ քրիստոնէական կեանքի կեդրոնը, միտքերու արեւը, եկեղեցւոյ զանձն ու հոգին: Այս ամենաքաղցր խորհրդեան զովասանքները անդադար կը քարոզեն Հարք, Վարդապետք, արեւելեան ու արեւմտեան ծէսեր, Ժողովներ. այս հրեշտակային հացն է զոր ամէնքս ուտելով կը միանանք, կ'երկայրակցինք. Ո՛վ խորհուրդ աստուածպաշտութեան, ո՛վ նշանակ միութեան, ո՛վ զօղ սիրոյ (Ս. Օգոստ.) Աստուած իր ամենակարողութեամբ մեծագոյն բան մը չէր կրնար ընել. իր անբաւ իմաստութեամբ չէր կրնար մեր բարւոյն համար ընտրելագոյն միջոց մը հնարել. իր անհուն բարութեամբ աւելի չքնաղ ու աւելի մեծագին պարգեւ մը չէր կրնար ընծայել մեզ (Նոյն):

Այս՝ այն վարդապետութիւնն է զոր Մալթացւոց նախահայրերուն քարոզեց Պօղոս Առաքեալ, զոր դաւանեցին առաջին քրիստոնեաներն որոնք երկրպագեցին, սիրեցին և ընդունեցան ինչպէս մենք, Գոհութեան Ս. խորհուրդը. որու առջեւ արեւնին թափելէ առաջ սիրով կ'երկրպագէին և վառ ու բորբոք

սիրով կ'ընդունէին ու կ'ընդգրկէին մարտիրոսները: Դարերու ընթացքին մէջ Կաթողիկէ Եկեղեցին միշտ պաշտպան կանգնեցաւ այս սուրբ Խորհրդոյս՝ ամէն տեսակ մոլորութեանց դէմ: Այս Խորհրդոյս կը պարտի նա իր զաւակներուն բարութիւնն ու բարեւարութիւնները, վարուց անարատութիւնը, մանաւանդ նեղութեանց ու կեանքի դժուարութեանց մէջ անոնց անպարտելի քաջասրտութիւնն ու կորովը, Երիտասարդ միսրոնարը՝ որ բարբարոս ազգաց քով կը վազէ ստէպ ստոյգ մահուան վտանգով. սիրասուն Կոյսը որ հիւանդանոցներու մզլոտած մըթնոլորտին մէջ իր հասակին ծաղիկը կը խամրեցնէ. այն ամէն երկնաւոր արարածները որոնք իրենց կեանքը կ'անցընեն ծերեր, բոլորոսներ, ժամատաստաւորներ խնամելու, իրենց խրախոյսը կ'առնուն Սուրբ Տապանակէն և Ս. Հաղորդութեան Սեղանէն. ամէնքը միաբերան պիտի ըսեն ձեզ թէ երբ Յիսուս կ'իջնայ իրենց սրտին մէջ ամբողջովին անոնց տալով Խաղիկները, իրենք ալ հարկադրիչ պէտք մը կը զգան ամբողջովին տալու զիրենք իրենց եղբարց, աղքատներուն, հիւանդներուն, թշուառներուն:

Յետոյ Միքանաւորը՝ կ'ախարկէ անցեալ դարու կէսէն առջին նորաբորոք խանդով սկսած ջերմեռանդութեան՝ զէպի Ս. Հաղորդութիւն, որ երջանիկ վերապարձ մըն է մոլորամիտ վարդապետութիւններէ և աշխարհային չարաչար միտութիւններէ, զորս կը սերմանէ՝ արդի ընկերութեան մէջ տիրապետող Բնապաշտութիւնը, մղելով զայն անկումի ու բարբարոսութեան, որ ամէն ջանք ի գործ կը դնէ՝ մեր միակ Փրկիչը զՅիսուս Բրիտոս ջնջելու համար միտքերէ, բարքերէ օրէնքներէ, հաստատութիւններէ, ամբողջ ընկերական կեանքէ, Ասկէ՝ ծագում կ'առնուն աղատամտութիւն, աղատ բարոյք. ատկէ՝ ցուրտ եսասիրութիւնը, անյագ տենչանք մը վայելքի, և ամէն ազնիւ և սուրբ գաղափարականի մերժում. անմահ հոգւոյն զէպի նիւթ ստորնացումն է այդ. Ուստի այս նիւթապաշտ մոլորութեան ու անոր չարաշուք հետեւութիւններուն հզօրեղապէս կը դիմա-

դրէ Ս. Հաղորդութիւնը. ան կը վսեմացնէ, կ'ազնուացնէ մտքերը, կը մաքրագործէ սրտերը, կը ներշնչէ մեծահոգի ու առատաձեռն գործերը, ա'ն երեւան կը բերէ գերբնական թագաւորութեան ջինջ հորիզոնները, սիրցնել կ'ուտայ մեզ մեր եղբայրները, նիւթական ու բեկանուտ բաներէն կը բարձրացնէ հոգեկան և յաւիտենական բաներու:

Ասոր համար է որ Մեծափառ Քահանայապետ Լեւոն ԺԳ. գերեզման իջնելէ տարի մը առաջ յիշատակաց արժանի Շրջաբերական Կոնդակով մը կը թուարկէր Ս. Հաղորդութեան անհամեմատ բարիքները, ցոյց տալով զայն իբր միակ ու գերագոյն դարման ընկերութեան չարիքներուն, և կը յորդորէր հաւատացեալները մնանելու, միշտ մնանելու կենաց Հացով:

Բայց ո՞վ աւելի քան մեր Մեծարոյ Քահանայապետն՝ Պիոս Ժ., նշմարելով որ մարդկային ընկերութիւնը խորապէս ցնցուած է իր դարաւոր հիմերուն մէջ, որ ճշմարտութիւնները մարդոց մէջ նուազեր են, որ կամքերը խնկած տկարացած են և անկարող դիմադրելու չարին, ո՞վ Անկէ աւելի յայտարարեց հռչակեց թէ Ս. Հաղորդութեան Սեղանն է զեղ և դարման մարդկային կիրքերու, անսպառ աղբիւր յարութեան ու կեանքի. նա՛ վերակոչեց Եկեղեցւոյ հին ու գեղեցիկ աւանդութիւնը, հաւատացեալներուն զիւրացուց այս Ս. Սեղանի մօտենալը. նա՛ յորդորեց յաճախակի և կարելի եղածին չափ հանապազօրեայ Հաղորդութիւնը, և ուզեց որ փոքրիկ մանուկներն իրենց կենաց արշաւոյսն իսկ սկսին՝ մաքրութեան ու սիրոյ աղբիւրակն ելող Յիսուսի երկրպագելի Սրտին հետ ներքին շփումի մէջ մտնել:

Այս 24րդ Համաժողովը, որ թէեւ պիտի չկարենայ ունենալ բնականաբար անցեալներուն մէկ քանի հատին նիւթական շրթնութիւններն ու առաւելութիւնները, սակայն անոնցմէ վար չպիտի մնայ և իր մասնաւոր ու առանձնաշատուկ նկարագիրները պիտի ունենայ: Մալթա կը վերյիշեցնէ Փրկիչիցիները, Հէլէնները, Կարճեղճացիները, Հոլմացիները: Մալթա անհուն ու շրջ-

նորան մըն է որ Միջերկրականի կապուտակ
ալեաց մէջէն կը բարձրանայ՝ Եւրոպիոյ, Ասի-
ոյ, Ինդիոյ և Ասիոյ երեք ցամաք երկիրներու
միջեւ . իր ափունքը ծածող ալիքները ուղղակի
կու գան Երուսաղեմէն և Հոռոմէն : Մալթացւոց
ջերմեռանդութիւնն ալ հիանալի առաւելու-
թիւն մը կու տայ Համաժողովին : Դարուց
փոփոխականութեան մէջ ո՛չ մէկ մարդիկէն
բիրտ ոյժ կարող եղաւ Մալթացւոց աներ-
կիւղ հաւատքը խորտակել : Անոնք անբա-
ժանելի կերպով միացած էին Ս . խորհրդոյն :
Ծաղկած են միշտ իրենց մէջ Ս . Հաղորդու-
թեան եղբայրութիւններ , այլեւայլ ջերմե-
ռանդութիւններ , թափօրներ , յաճախակի
հաղորդուելու սովորութիւնը , եւայլն :

Պերճախօս Ծիրանաւորը կը յիշատակէ
Մալթայի Ասպետաց Կարգին հին փառքերը ,
անմոռանալի յաղթանակները , Ս . Կրօնքի
անմահ ծառայութիւնները , Մալթայի հրա-
շալի ազատումը՝ ինչպէս օգնականութեամբ :

Հո՛ւս ուրեմն , ի Մալթա , ա՛յս հաւատաց-
եալ ժողովրդեան մէջ աւելի գերապանծ սի-
տի կատարուի Համաժողովը՝ Ս . Հաղորդու-
թեան , Կղզեցւոց և բազմաթիւ ուխտաւո-
րաց անհուն սիրովն ու յարգանքովը առ Յի-
սուս Քրիստոս : Հոս պիտի փառաւորենք մեր
Աստուածային Վարդապետը ի Ս . խորհրդեան .
պիտի հռչակենք իր Վեհապետութիւնը՝ աշ-
խարհի , անհատներու և ընկերութեան վրայ .
Անոր՝ իբր Ստեղծողի ու Փրկչի , պարտ ու
պատշաճ արքայական յարգանքներ պիտի
մատուցանենք , Ս . խորհրդեան մէջ իրեն գէժ
գործուած անարգանքներուն մերովսանն փո-
խանակելու համար , միաբանութեամբ բողո-
քելու համար անոնց դէժ որոնք ցաւալի մո-
լորութեամբ կը ջանան վտարել զինքը ընկե-
րութենէն , ընտանիքներէն , մարդոց մտքե-
րէն ու սրտերէն . վերջապէս փոփոխակի բոր-
բոքելու համար մեր սէրն առ մեր ամենա-
քաղցր Յիսուսը , որ նախ ինքը այնչափ սի-
րեց զմեզ » :

Անկարելի է խօսքով բացատրել թէ ո՛ր-
պիսի խանդավառ ցնծութիւն յառաջ բերաւ
Վտեմ . Ծիրանաւորին այս հոյակապ ճառը ,
որ ընդ երկար ծափահարուեցաւ հանդիսա-
տեա բազմութիւնէն :

(Շարունակելի)

ՀԷՅԷԹԻ ԻՃԹԻՄԱԻՅԷՆԻՆ ԱՅԻԼԷ ՎԱՍԻԹԱՍԸ ԻԼԷ ԹԵՐԱԳԳԸՍԸ (*)

Հէր աիւրիւ թէրագգիյաթը իճթիմայէ-
նին դարուրի թէմէլի վէ թապիի մէսնապը
օլան պիւ միւհասիսէ վար տըր : Պիզգաթ
ձէնապը Հազգըն էսէրֆ սանաաթը պուլըն-
պըղը իւին իւթատանէ պիւ միւհասիսէ տիւր ,
քէլիմէնին մանէպը սահիւրլէ էսասի պիւ
միւհասիսէ տիւր . զիւրա պու պինսեաթօգու-
մազ անը աշաղըտան եօգարընա սարաւմազ
տէմէք տիւր . պու մուգաստէս վէ լայէմութ
միւհասիսէին իսմի այիլէ տիւր :

Էսվէթ , էֆէնտիլէր , ումումի հէյէթի իճ-
թիմայէնին Վաթանըն թահիթընտա այիլէ
հէյէթի իճթիմայէնիս վար տըր . պիւրինճիսի
փէինճիւմէ օգատար դայըր միւնֆէք պիւ
սուրէթտէ պաղլը տըր քի , պիւրինին թէրագ-
գըյաթ վէ ինհիթաթը տիկէրինին թէրագ-
գըյաթ վէ ինհիթաթընը թէվլիս իտէր . միւ-
պարէզաթը սիյասիյէմիզտէ , միւհասիսէպը
նազարիյէմիզտէ , աիլէյի ինմալ իսիյօրըզ :
Ումութըյօրըզ քի հէյէթի իճթիմայէնին թէ-
րագգընը ինսան էլինտէն չըգմա պիւ պինա
եախօս պիւ տահիինին էսէրֆ տէյիլ տիւր , ֆա-
գաթ քէօքլէրինի մէնպար հաւաթըմըզ օլան
քէտէր գալպի վէ վալիտէ գալպինէ սալտըր-
մըշ պիւ աղաճ տըր . գէմանըմըզն էն պէօ-
ցիւք մուհարրիլէրինտէն պիւրի . «Այիլէ , պէ-
շէրիյէթին իքինճի բուհը տըր : Վազիի գա-
նաւըսար այիլէյի ֆաղլաճա ունութուպ ֆէզա-
լէրի վէ միլլէթլէրի տիւշիւնիւյօրլար : Դալի
վէ սաֆ ճէմաաթլարըն եէկեանէ մէնպար ,
պիւթիւն ֆէզաիլի իճթիմայէնին ֆէյզ պուլ-
տըղը անանաթ վէ աստապը ախլապիյէնին
մապէտի օլան այիլէ նազարը տըգգաթլարը-
նա չարմայօր» տէմիշ տիւր : Պու քօնֆէ-

(*) Մեծաւ գոհութեամբ կը տպենք Ռ . էֆ .
Խըրաքեանի կողմանէ հռչակաւոր Բեր-Ֆիլիքսի բա-
նախօսութիւններէն թարգմանուած և մեզ զրկուած
այս տաճի երէն յօդուածը , մանաւանդ որ յիշեալ բա-
րեբարոյ երկասարգը կը խոստանայ մերթ ընդ մերթ
գրել այլեւայլ օգտակար նիւթերու վրայ . մեր շնոր-
հակալութիւնները :
ԾԱՆ . ԽՄԲ .

բանաստան հէյէթի իճթիմաիյէնին մէսպտէսի, նիւմուհէսի վէ գոււվէթի ալիլէտէ պուլլն տըղընը իսպաթ իտէրէքտէն պիրինի տիկէրինէ բապթ իտէն միւնպսէպաթը սամիմանէյի կէօսթէրէճէյիզ :

Ա. Իվլէհ, ալիլէսին հէյէթի իճթիմաիյէ իւզէրինէ օլան թէէսիրինի կէօսթէրէն չէյ, պիրինճիսին իքինճիյի աօղուրմասը տըր. ալիլէ հէյէթի իճթիմաիյէնին թէվէլլիւտիւ, թէչէքթիւլիւ, անանաթը տէմէք տիր, վէ պու միւնասէպէթլէ պիզզաթ Վաթանըն տայիմա միւնպիթ վալիտէսի տիր :

Թարիս վէ ճօղրաֆիյա ալիմլէրի արզըմըզը կիւլտիւրէն նէհիրլէրին մախֆի մէն պալարընը աթէչին պիր մէրազ վէ թէճէս սիւսլէ արաշտըրըլար. ճէրիանընտա միլլէթլէրին սաատէթինի նիզամ վէ թէրազգի իճթիմաիյէն ինթիշամընը, ասըրլարըն մէտէնիյէթինի կէօթիւրէն ինսանըն պէչէրիյէ նէհիրինին նէ կիպի պիր մէնպատան չըգտըղընը արաշտըրմազ, տահա միւնիմ տահա զիյատէ ճալիպի տըզգէթ տիր. հայաթը իճթիմաիյէնին մէնպար նէ տիր վէ օ հայաթըն նէսլին տէրի հիքմէթի քիմ սէօյլէյէպիլլիւ : Էֆէնտիլէր, պուրատա իքի նօզթա վար քի հիլ քիմսէյէ մախֆի տէչիլ տիր : Պու մէնպարն մէհալլի վէ ազմասընյն միւթէմատի վէ ումումի օլմասը քէյֆիյէթի. հայաթը իճթիմաիյէնին նէհրի ալիլէ օճաղընտան չըգար. ալիլէ Վաթանըն էօլմէզ մէնպար տըր :

Հալպուքի նէհիրլէրին հուվարլատըզլարը սուլար մէնպալարընտան ֆըշըքրան սուլարտան ֆարզը տէչիլ տիր. պիլիօրըմ քի, պու տալլալար պիտայէթտէ նէ գատար սաֆ վէ բազ օլսալար՝ ճէրէհանլարը էսնասընտա վէ պէօյիւք նէհիրլէրէ գարըշտըզլարը վազըթ սաֆիյէթլէրինի զայպ իտէպիլլիւլէր. ֆազաթ գաիտէի ումումիյէ օլարազ նէհիրլէրին սուլարըն չայլարտան վէ չայլարըն սուլը մէնպալարընտան թէմիզ օլմամազ : Պու սուրէթլէ ալիլէտէն իսթիւպաթ վէ իսթիհալ իտիլէն հանաթ, պիր չօգ քիրահէթլէր հուվարլատան ասըն ճէրէհանընտա պօղըլըր. ֆազաթ ումումիյէթլէ հէյէթի իճթիմաիյէտէքի հանաթ ալիլէսինքի գատար կիւզէլ օլամազ :

պիր սանիյէ թէսալվուր իտիլիզ քի հէյէթի իճթիմաիյէ, ազլը քէօթիւյէ մայիլ, գալպի պօղուլմը, գանը ֆաքիլլէնմիշ ալիլէրտէն թէչէքթիւլ իթմիշ : Պու թագտիրատէ գանուհ. լարըն եիւքսէքիլի, տահիլէրին քէչֆիաթը նէ օլուրսա օլսուհ, գարչընըզտա գարուրէթէն սէֆիլ, էսարէթէ հազըր պիր հէյէթի իճթիմաիյէ կէօրիւրսիւնիւզ : Այիլէ հանաթընտան չըգարքէն հէման ֆէնալաշմը օլան պու մախլուզլար, հէյէթի իճթիմաիյէյէ կիրէրքէն ճանի օլըրլար, գարչընըզտա ինհիթաթա տիւշմիւշ պիր հէյէթի իճթիմաիյէ, պիր պարպար պէչէրիյէթ կէօրիւրսիւնիւզ :

Պիլաքիա, հալը հազըրտաքի պէչէրիյէթլէ մէնպալար միսիլու, պիւթիւն ալիլէրին վէ քէնտիսինտէն չըգան նէսլլէրին հէյէթի իճթիմաիյէյէ տաիմա սէհվիաթտան արի հագիգաթլէր, ֆէսաստան արի ախլազ ու աւտաթ, հէր տիւրլիւ պօղուզլըզտան արի պիր գան տէօքտիւկիւնիւ ֆարզ իտէլիմ. նէթիճէտէ ֆիքրէթ, հէսասիյէթ վէ իրատէթ վէ ճիւմ նօզթայը նազարընտան տահա գալի վէ ալի պիր պէչէրիյէթ չըգար : Պիր տէ ֆարզ իտէլիմ քի եէկտիկէրիյէ ալիլ բապթա իլէ պաղլանմը օլան պու ալիլէրին ճիւմլէսինի օլտըզճա միւքէմմէլ ատամլար վէ գանուհլար իտարէ իտիյօր : Պու թագտիրատէ, իլմին, սիյասէթին, սանաթըն տէհասըլա քիւրրէի արզ իւզէրինտէ իճրա իտիլէն թէրազգըլաթ վէ թէալիյաթտան սարֆը նազար տէրիմքի, գարչընըզտաքի հէյէթի իճթիմաիյէ քէլիմէնին մանապըլա պէօյիւմէք վէ իլէրիլէմէքտէ տիր :

Հայաթը իճթիմաիյէ նէհրի մէնպարնտան ախզ իթաիկի սաֆ վէ պաքիր սուլը սէվգ իտէրէք սաքին սաքին հօլընտա ազար վէ էկէր քէնտիսինի պիր ազ պուլանտըրան պազը լէքէլէրէ թէսատիւֆ իտէրտէ նէհր, մէնպարնտան ազան պօղըլմազ պիլմէհէն պէքեարէթ վէ սաֆիյէթ սայէսլինտէ, քէնտիսինի թէմիլլէր վէ թէճէտտիւտ իտէր : Պէօյլէ պատիթ պիր սուրէթտէ, ալիլէ կիպի, պէչէրիյէթին իսթիգալլինի համիլ օլան պիր հագիգաթ թէրէսիւմ իտիյօր. հանի մէնպալար նէհրէ գարչը նէ իտէ, ալիլէ տաիլի հէյէթի

իճթիմաիյէ դարչը էօյլէ տիր . վէ Վաթան-
տա կէօրիւլէն հայաթ ալիլէտէն չըգաղղըն-
տա նէ իսէ հէման էօյլէ տիր :

ՌԱՅԱՑԷԼ ԽՐԼԱՔԵԱՆ
(Մապասի վար)

ՖԻԷՏԷՐԻՔ ՕԶԱՆԱՄԻ ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿԸ

(Շար. եւ Վերջ)

Քահանայապետաւրան նամակին ընթեր-
ցումէն յետոյ խօսք կ'առնու Վանուգէլի
Կարդինալը և զօրեղ ու վճիտ ձայնով , կ'ար-
տասանէ պերճ եւ վեհիմաց բանախօսու-
թիւն մը :

Ինչ կրնամ աւելցնել, կ'ըսէ նախ Պա-
ռիարկը , անո՛ր խօսքերուն, զոր ամբողջ ե-
կեղեցին եւ յազակապէս Ֆրանսա կ'ողջունեն
եւ կը յարգեն իբրեւ մին ամենէն նշանաւոր
Քահանայապետներէն, զորս Աստուած պար-
գելեր է, դարերու ընթացքին մէջ, իր Աս-
տուծային հարսին: Կը մնայ ինձի սակայն
յայտնել Ձեզի անհուն գոհունակութիւնը ո-
րով սիրս լեցուած է, որուն առաջին պատ-
ճառն է այս ամենէն բաղք, հաճոյական եւ
փառաւոր Առաքելութիւնը զոր եկած եմ կա-
տարելու:

Վսեմ. Բանախօսը իրեն ուղղուած ծա-
փերն ու կեցցէները կը վերադրէ համեստօրէն
միայն Ս. Հօր՝ որ կը սիրէ Ֆրանսան եւ
սիրուած է Ֆրանսայէն, որուն Թագաւորու-
թեան վրայ հիմնալու ստիպուած են նոյն
իսկ անոնք, որոնք Աստուծոյ չեն հաւատարմ:

Վանուգէլի Կարդինալը՝ կ'աւետէ ապա
Պիոս Ժ.ի առողջութիւնը . և կ'անցնի ու-
սումնասիրելու Օգանաւի մեծ Դէմքը , անոր
ճարտարխօսութիւնը, անոր սքանչելի երկերը ,
անոր ոսկի սիրտը , զթառառ սէրը , առաքե-
լական ձիրքերը . Այս մեծահռչակ աւխար-
հականը . . . առաջնակարգ տեղ մը կը զը-
րաւէ քե՛՛ նշանաւորեան ամենէն անվեցե-
ելի հոյակապ պաշտպաններուն եւ քե ընկեր-
սիրութեան ամենէն առաքինի եւ արիասիրտ
դիւցազներուն շարքերուն մէջ:

Սրբազան Հօր օրհնութիւնները յատկա-
պէս ուղղուած են Օգանաւի գլխաւոր գոր-
ծին , Ս . Վ . Պաւլայեցւոյն կաճառներուն .
զորոնք եռանդեամբ ու պարտ և պատշաճ
կերպով կը դրուատէ Պատուիրակ Կարդինալը
և յետոյ կը հարցնէ Ինչ կը նշանակեն Ս .
Հօր այս օրհնութիւնները . և կը պատաս-
խանէ .

Ասոնք ցոյց կու տան ամեն բանէ առաջ՝
այն հայրական լաւակամութիւնը որով Ն.
Սրբութիւնը իր յուսալից եւ սիրազեղ ալ-
նարկը սեւեռած է այն ազնիւ ազգին վրայ ,
ուր այս գործը ծնունդ առեր է, ուսկից ծա-
ւալիւր է ամբողջ տիեզերքի մէջ, շնորհիւ Ֆր-
անսայի ծագած Քրիստոնեական եւ այնքան
վեհանձնական մղումին. շնորհիւ անմահ
եռանդին եւ ջանքերուն Օգանաւի եւ ուրիշ
զաւակներու այս ազգին, զոր Գրիգոր Թ .
Քահանայապետը կը կոչէր արդէն, Ս . Լու-
ղովիկոսի ժամանակ, ազգ ընտիր: Մեր Տէրը ,
կ'ըսէր , Ֆրանսան ընելով յատկ գործակատար
Իր Աստուծային դիտման, անով զինուած
է իբրեւ կապարճով. անկէ կը հանէ եւ կը նե-
տէսէս կորուսի նետեր, Իր աննակարող քաղ-
կին աղեղով, կը նետէ զանոնք աշխարհի մէջ՝
հաւատքի պաշտպանութեան եւ եկեղեցւոյ ազա-
տութեան համար, անբարշտութեան կործանումին
եւ արդարութեան յաղթանակին համար:

Վսեմ. Կարդինալը կը վերջացնէ ըսելով .
Յանուն զիս դիպողին կ'ամփոփեմ երեք ող-
ջոյնները, զորս կ'ուղղեմ ձեզի սրտի սա ե-
րեք հառաչներով: Յարգանք Օգանաւի. յար-
գանք Ս . Վ . Պաւլայեցւոյն Ընկերութեան,
յարգանք Ֆրանսայի:

Կարդինալ-Պատուիրակին ճառը աննկա-
րագրելի խանդավառութիւն յառաջ բերաւ:

Խօսք առաւ ապա Ս . Գալոս, Ս . Վ . Պաւ-
լայեցւոյն Ընկերութեան Ընդհ. Նախագահը .
վառվառ պերճախօսութեամբ շնորհակալու-
թեան պարտքը հատուցանելէ յետոյ , ըսաւ .
Ընկերութիւնը որուն կը նախագահեմ ունի
միայն մէկ գրօշակ , Խաչը . միայն մէկ մտա-
ծում , բարին : Խօսելով Ընկերութեան գոր-
ծունէութեան վրայ յայտնեց թէ ան՝ ամէն

տարի 15,000,000 ֆրանքէն աւելի կը բաշխէ կարօտելոյ :

Մ. Գարոնի յաջորդեց Մ. Կալլապրէզի, պատգամաւոր Միլանի Բարձրագոյն խորհուրդին, եւ հետագայ ճառով մը պարզեց ինչ որ Իտալիա կը պարտի Օգանամի, եւ ինչ որ Օգանամ կը պարտի Իտալիոյ :

Մ. Սինկլուպէր, Նախագահ Պելճիգայի Բարձրագոյն խորհուրդին, պարզեց Օգանամի ազդեցութեան Ֆրանսային դուրս ճառագայթումը. ծանրացաւ Պելճիգայի վրայ, ուր այժմ կը գտնուի 1300 Կաճառ Ս. Վ. Պաւլայեցւոյն, որոնց անդամներուն թիւը 20.000էն աւելի է :

Ամէնէն վերջը խօսեցաւ Բարիզի Արքեպիսկոպոսը Կարդ. Ամէթ. շնորհակալութիւն ուղղեց Պիոս Ժ.ին, Կարդինալ Վանուզէլլիի, օտար պատգամաւորներուն. յարգանք մատուցեց Օգանամի յիշատակին Բարիզի Թեմին կողմէ. վերջացուց խօսքը գովելով մասնաւորապէս Օգանամի մեծագոյն առաքելութիւնը, անոր գործունէութեան ոգին. ընկերակցութիւնը :

Երկարատեւ ծափեր և ցնծութեան աղաղակներ :

Ոտքի կ'ելլէ Պատուիրակ-Կարդինալը բազմութիւնը օրհնելու. բոլոր հանդիսականները կը ծնրադրեն, խորհրդաւոր լռութիւն մը կը տիրէ. Կարդինալը հանդարտ և հզօր ձայնով կու տայ հաւատացելոց Քահանայապետական օրհնութիւնը :

Նիստը փակելէ առաջ Մ. Գարոն կարդաց Մէրի տէլ Վալի ուղղուած հեռագիր մը, որուն մէջ բոլոր հանդիսականք կ'ընծայեն Պիոս Ժ.ի իրենց սիրոյն և հաւատարմութեան հաւաստիքը, և կը մաղթեն յարատեւ առողջութիւն :

Միաձայն հաւանութեամբ կ'ընդունուի այս հեռագիրը և հանդիսականները կը մեկնին սրահէն կրկին և կրկին գոչելով Կեցցէ՛ Պիոս Ժ., Կեցցէ՛ Կարդինալը :

* * *

Յաջորդ օրը, Կիրակի, Վսեմ. Պատուիրակը Պատարագ մատուցեց Մոնմարտրի Սիրտ-Յիսուսի եկեղեցւոյն մէջ. Այնքան բազմաթիւ

էին հաւատացեալք որ հակառակ եկեղեցւոյն ընդարձակ մեծութեան, երեք չորս հազար հոգի ստիպուեցան դուրսը կենալու. Եկեղեցւոյն մէջ վեց հազար հոգի միաձայն խանդավառ երգեցին Դու ես Պետրոս երգը, Հաւատարմութիւն, Մեծացուցէն, Աստուած իմ, գրութիւնը: Հաղորդութեան երեք հազար հոգի :

* * *

Կէսօրէն յետոյ բիւրաւոր հաւատացեալք հաւաքուեցին Նոթր-Տամ Մայր եկեղեցին. Հիանալի խանդավառութեամբ ընդունեցան Ս. Քահանայապետին Պատուիրակը որ Ս. Հաղորդութեան օրհնութիւնը տուաւ բազմութեան. անհամար լանջքերէ բարձրացան Հաւատամքի նուիրական շեշտերը ու թնդացուցին դրդեցին Տաճարին երկնասլաց կամարները: Հայր Ժանվիէ, Տօմինիկեան կրօնաւորը, բեմ ելաւ և արտասանեց Օգանամի Ներբողականը. որուն ունկնդիրներուն վրայ ըրած ազդեցութիւնը արդարեւ աննկարագրելի է :

* * *

Վսեմ. Պատուիրակը, այցելեց նաեւ Կաթողիկէ Գործաւորաց Ակումբները (Cercles), որոնց պաշտպանն է ինքը Հոռմի մէջ. Մոնմարտրի Ակումբին մէջ ի պատիւ իրեն ընդունելութիւն մը կազմակերպուեցաւ. Իրիկունը ժամը ինն ու կէսին կը հասնի Վսեմ. Պատուիրակը իր հետեւորդներով և կ'ընդունուի Կեդր. Ժողովին կողմէ. Ակումբին երաժշտական խումբը կ'երգէ, կը նուագէ. արուեստական վճիտ լոյսեր կը ցոլցնեն ամէն կողմ. Կեցցէ՛ Պիոս Ժ., Կեցցէ՛ Պատուիրակ Կարդինալը աղաղակները օղը կը թնդացնեն :

Կեդր. Ժողովին Նախագահ Կոմս տը Մէօնի և այլոց խանդավառ ձօներէն, բանախօսութիւններէն յետոյ կը սկսին խումբ խումբ տողանց ընել՝ դրօշակներ պարզած՝ Բարիզի այլեւայլ Ակումբներն ու Ընկերութիւնները. սքանչելի տեսարան. ամենամեծ ապացոյց մը թէ Ֆրանսան միշտ երէց Դուստրն է եկեղեցւոյ, հակառակ իր կառավարութեան զատապարտելի ընթացքին :

Ասեմով, կ'ըսեն արհեստաւորները, երբ Քահանայապետին Նուիրակը հասնէր, Քաղաքապետ

սուրբունք անոր կ'ընծայէր քաղաքին քանակի-
ները. արհեստագետները անոր կը բերէին ի-
րենց առեւտրէն չմնաց հրաշակները. մենք,
արդի արհեստաւորաց ներկայացուցիչներս, ձեզի
կ'ընծայենք, Վսեստաշն'ւֆ Տէր, մեր սիրտնուն
քանակին:

Վսեմ. Կարդինալը հայրագործով լեզուով
մը կ'արտայայտէ իր իղծերը, կը գովէ դարձ-
եալ Օզանամը, ամենուն առաջնորդն ու օ-
րինակը. կ'օրհնէ՝ ծնրադիր բազմութիւնը ու
կը մեկնի. նուագն ու երգը, ծափն ու կեց-
ցէն օղը կը դղրդեն. գունապեղ լապաներն
լոյս կը հոսեն հեղեղօրէն, և շրջավայրերը
կ'արձագանգեն խնդասփիւռ՝ ԿԵՑՑԷ ՊԻՈՍ Ժ.:

Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՌՋԵՒ
ՀԱՌԱՏՈՅ ՅՈՒՍՈՅ ԵՒ ՍԻՐՈՅ
ՆԵՐԿՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

Յիսուս այս Սուրբ Խորհուրդով՝
Ազամի գաւազաց
Յայտնեց իր գութն ու գորով.
Իր մարմինն քաւ հաց.
Անգին արիւնն՝ քմայելի.
Եւ խորան՝ մեր սիրտեր:

Կր հաւատամ, Տէ՛ր, եւ կ'ուզեմ անհալի
Տեսնել գ'բեզ, սիրել գ'բեզ աւելի.
Ո'հ, բո՛ղ որ գամ երկինք, ով Տէ՛ր:

Բ.

Երկինքի մէջ, ո'հ, որքան
Երանեալ կը բերկրին.
Տէ՛ր, Դուն հոգ ղեմ յանդիման
Կ'երեւիս հոգիին.
Ես այս տեսիլդ ցանկալի
Կը սպասեմ անհամբեր:

Կր յուսամ, ո'վ Տէ՛ր, եւ կ'ուզեմ անհալի
Տեսնել գ'բեզ, սիրել գ'բեզ աւելի.
Ո'հ, բո՛ղ որ գամ երկինք, ո'վ Տէ՛ր:

Գ.

Հոս իմ անձէս առաւել
Կը սիրեմ այս Արքան.
Եւ կ'ուզեմ միշտ ա'լ սիրել.
Այս սէրն է գրաւական
Երկնից սիրոյն անյեղի,
Սկսեալ անանց սէ՛ր:

Կր սիրեմ, ո'վ Տէ՛ր, եւ կ'ուզեմ անհալի
Տեսնել գ'բեզ, սիրել գ'բեզ աւելի.
Ո'հ, բո՛ղ որ գամ երկինք, ո'վ Տէ՛ր:

Թարգմ. ԽԱՉԻԿ Վ. ԱՔԱՆԱՍԵԱՆ

ՕՐՄԱՆԵԱՆԻ

”ՀԱՅՈՅ ԵՅԵՂԵՅԻ, ՊԻՐԲԷ (•)

Դ.

Աւանդութեանց վրայ հիմնուած պատմա-
աբանութիւններու կը կցէ հեզիքալը նաև
ժարունակութեամբ հաստատուած եղելու-
թիւններ, որոնց համար վերը ըսածնիս կըր-
նանք կրկնել. եթէ այդ եղելութիւնները
ստոյգ են եւ պատմականօրէն ճշմարիտ հիմ-
ունին եւ իրենց շարունակութիւնն ալ նոյն-
պէս պատմական այսինքն իրական է, այն
ատեն ստոյգ փաստերէ չեն տարբերիր. եթէ
լոկ հաւանական ու կարծիքական են՝ կը
մնան հաւանականութեան ու կարծիքի շք-
ջանին մէջ. եւ եթէ այդ եղելութիւնները
չխնդու են հիմնապէս՝ աւելորդ է անոնց ճա-
րունակութեան վստահիլ, արդողութեամբ
յերիւրանք է և պիտի մնայ Շապ յառաջ է
այս եւ միկնութեան պէտք չունի. ուրիշն
Օրմանեան ալ կրնար նուազ խճողել իր սկզբ-
բունքը եւ աւելի յստակ ըլլալ՝ եթէ ըզէր.
Եղելութիւն մը հաստատուն, ստոյգ եւ ան-
հերքելի ըլլալու համար նոյնպիսի փաստե-
րունեալու է պատմութեան մէջ. հակառակ
պարագային կամ կը վստառի պատմութեան՝
երբ անհիմն ըլլայ եւ սխալ, կամ պարզապէ-
սիկ կը մնայ, երբ լոկ հաւանականութեան
փաստեր ունի: Եկեղեցական պատմութիւնը
ուրիշ պատմութեանց պէս իրողութեան վրայ
հիմնուած ըլլալու է եւ ո'չ հեփեալներու,
եթէ չ'ուզեր Օրմանեան այդ պատմութեան
եկեղեցական ըլլալուն համար՝ իր Արդիա-
պաշտ եղբարց հետ պատմական զրաւակնու-
թենէ մերկ նկատել այն մոլար ու սքրապիղծ
սկզբունքով թէ՛ որովհետեւ եկեղեցական
պատմութեան մէջ մանաւանդ հաւատարմ,
կրօնքի եւ առհասարակ պերնականի հետքն
ու գործը անանելու է, ուստի պատմական և
իրական ըլլալու պէտք չունի եւ չի կրնար
ըլլալ: Արդիապաշտք միայն, որոնց աղան-
դը ես անկրօնութեան կրօնք եւ վարդապե-
տութիւննին՝ անասուածութեան ասուա-

(•) Տես Թիւ 94 էջ 245:

ծաբանութիւնն պիտի անուանեմ, պատմութեան մէջ գերբնականի հետքը անպատմական կը նկատեն՝ որքան ալ իրական զէպքերով մարմնացած ըլլան անոնք. վասն զի, կ'ըսեն, հաւատք, կրօնք եւ առ հասարակ գերբնականի վերաբերումը մարդոց եւ մարդկային գործոց հետ, ժողովուրդներու կամ անձինքներու ներքին զգացումէ, պէտքէ մը առաջ գալով, ենթակայական ու անձնական տեսութիւններէ կը բղխին ու անոր համար ալ աւելի պատմութեան աղաւաղում քան լրացում մը կրնան նկատուիլ: Մէկ խօսքով Արդիապաշտք զրական պատմութեան ու հաւատքի եւ գերբնականի հետք ունեցող պատմութեան մէջ միեմ խտրի կը տեսնեն ու կը գնեն. առաջինը արտաքսած է մէջէն ամէն գործակցութիւն գերբնականի ու նոյն իսկ Աստուծոյ ու Անոր Նախախնամական տեսչութեան, նոյն իսկ երբ պատմականօրէն միջամտած ըլլայ Աստուած, որմէ կարելի չէ որ խուսափի ո եւ է պատահար: Հետեւաբար զրական պատմութեան կ'արտաքսեն զԱստուած, հրաշք, հաւատք եւ նոյն իսկ Սուրբերուն այս տիտղոսը անհամաձայն կը գտնեն պատմական մերկութեան ու կ'անուանեն զանոնք պարզ անուամբ Օգոստինոս, Ներսէս, Ոսկեբերան եւն. եւ առաջ երթալով իրենց յանդիմութեան մէջ պատմական Քրիստոսի եւ հաւատքի Քրիստոսի մէջ խտրութիւն կը մտնեն. զառաջինը պարզ մարդ, զերկրորդը միայն Աստուած նկատուի. որ գործը համարժէք է ուրացութեան, վասն զի հաւատքի Քրիստոսը հաւատացեալներու խելապատակէն չինուած է յեղաշրջելով պատմական Քրիստոսը: Դարձեալ նոյն սկզբունքով է որ թէ՛ պատմութիւն գրելու մէջ, թէ՛ նոյն իսկ գրականութեան մէջ մոռնալու է գրողն իր քրիստոնեայ, կաթողիկէ եւ քահանայ ըլլալն իսկ եւ կրօնական ո եւ է գոյն, նշոյլ ցայտելու չէ գրչէն, նոյն իսկ նիւթը պահանջած ատեն. հետեւաբար ո եւ է գրութիւն բացարձակապէս առարկայական ըլլալու է, որ ըսել է իրենց լեզուով ներքին պատմութեան, հաւատքի պատմութեան բոլորովին անկախ, եւ այն աստիճանի անկախ որ

պատմականօրէն պիտի կարենայ ուրանալ ինչ որ հաւատքով կը դաւանի: Ուստի երկրորդը՝ կ'ըսեն, այսինքն գերբնականի հետք ունեցող պատմութիւնը, որուն կարգէն ըլլալու է եկեղեցական պատմութիւնը, կրնայ եւ ընդունակ է պատմականը խեղաթիւրելու. անկէց շեղելով, երեւակայականը ներմուծելու եւ տեղի տալու համար այսպէս հեքեաքներու: Արդիապաշտներու այս սկզբունքները աչքի առջեւ ունենալէ ետք թո՛ղ տեսնեն ընթերցողները անգամ մըն ալ թէ ինչպէս Օրմանեանի գրչէն կը հոսէ յաճախ յայտնուիչս կամ գաղտնաբար նորադանդ արդիապաշտութեան թունալից մելանը:

Հոս տեղը չէ Արդիապաշտներու մոլեգնութեանց պժգալի ծայրայեղութիւնը, հակասութիւնը, ստույգութիւնը ամբողջովին մերկացնել, խայտառակել ու ջրել. սակայն կարելի չէ չտողքել այն միեմ նախատանքին զէմ, որ կու գան մեր մէջն ալ ընելու Օրմանեանի բերնով՝ եկեղեցական պատմութեան: Ո՛չ, եկեղեցական պատմութիւնը գաղափարային, մտացածին չէ. պատմութեան աղաւաղումը, յեղաշրջումը, եղծը չէ, այլ միւս ամէն պատմութեանց պէս եւ անոնցմէ աւելի երաշխաւորիչ հաստատութեամբ զրական եւ իրապէս պատմական՝ ստոյգ եղելութեանց եւ փաստերու վրայ հիմնուած է. եւ անոր մէջ գերբնականն իսկ, Աստուծոյ միջամտութեան ու տեսչութեան հետքն ալ պատմական է, որմէ չի կրնար բաժնուիլ պատմութիւնը առանց ստելու: Անաստուած ու զգերբնականը նախապէս մերժող պատմութիւնը, աստուածուրացութեան պէս անզգամի գործ է. իսկ հեքեաքներու եւ անպատմական աւանդութեանց վրայ զիտումնաւոր կերպով շարադրուած ու անձնական տեսութիւններով իրարու կարկտնուած եկեղեցական պատմութիւնն ալ նախատական է եկեղեցւոյ ու վնասակար: Եթէ Ուրեմն Օրմանեան հիմնուած վերը դրուած իմաստով վնասակարութեան վրայ, եկեղեցական պատմութիւն կը գրեմ ըսելով, կը կարծէ թէ հեքեաք կը շարադրէ եւ ոչ զրական պատմութիւն մը, լաւ կ'ըլլայ բացէն ըսէ եւ բառերու դար-

ձուածքներով չծածկէ միտքը: Դժբախտաբար շատ իրաւ է թէ միտքն այդ է և հասկըցողին համար նա յայտնած է այդ. ինչպէս զիւրաւ պիտի տեսնենք Գ. սկզբունքի քննութեան մէջ:

(Շարունակելի)

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՒՆԷ

ՏՕՆԱՅՈՅՑ

Մայիս 18	† Կիր. ամ.	Տօն Ս. Երրորդութեան
19	Բշ. ակ.	» Հռիփսիմեանց
20	Գշ. ըմ.	» Գայիանեանց
21	Դշ. ըկ.	» Պանոս
22	Եշ. զմ.	» Հաղորդութեան
23	Ուրբ. գկ.	» Պանոս
24	Շր. զմ.	Ս. Գր. Լուսաւորչի ելն ի վիրապէն

Ս. ՓՐԱՆԿԻՍԿՈՍ ՍԱԼԷՋԵԱՆ (S. François de Sales)
(Շար.)

Իր քարոզները, իր համբերութիւնը և բարի օրինակները սրտերու վրայ հրաշալի ազդեցութիւններ ըրին: Միշտ հետիոտն կը քալէր թէեւ առհասարակ ոտքերը ճեղքուած էին և սրունքները արիւնստ. երբեմն ալ ճամբորդութեան ատեն գիշերը վրայ հասնելով կը ստիպուէր գիշերը դաշտերու մէջ անցընելու, ժառերու տակ կամ մացառներու երկայնքին: Բայց իրեն վարձքն էր Սուրբ Հոգւոյն միջնորդութիւնները, որոնք իր աշխատանքին համեմատութեամբ կ'ողողէին իր սիրտը այնքան յորդ վայելքներով որ օր մը ստիպուեցաւ գոչելու. Տէ՛ր, դադրեցո՛ւր զնորհիւդ ալիքները. եւ հետագի՛ր ինձմէ. քու քաղցրութիւններդ դիմանալու չափ զօրութիւն չունիմ:

Հայհուները, հալածութիւնները չէին կրնար իր եռանդին խափան ըլլալ: Յաղթեց մարդասպաններու, հրաշքներ գործեց մինչեւ անգամ մեռելներու յարութիւն տուաւ. հերետիկոսներու այնքան դարձերն ալ մի՛թէ մեծամեծ հրաշքներ չէ՞ն: Թոնոն քաղքին մէջ երբ սկսաւ քարոզել միայն եօթը կաթողիկէ կար. բայց երբ առաջին Պատարագը մատուց հրապարակաւ Ս. Երեմիայի տօնին օրը, ներկայ էին ութը հարիւրէ աւելի կաթողիկէներ, զորս նոր դարձի բերեր էր. և ինչպէս Ս. Եկեղեցին կը յիշատակէ իր տօնին օրը, ժամերգութեան մէջ. եօթամասուն եւ երկու հազարէն աւելի մարդ դարձուց կաթողիկէ Եկեղեցւոյ ծոցը:

Ճինեվրայի մէջ ստիպեց թէոգոր Պէզը խոստովանելու թէ Հռոմէական հաւատքը ամենէն աւելի ապահով միջոցն է փրկութեան:

Ճինեվրայի Եպիսկոպոսը ետ կեցուց զանիկայ իր փառաւոր աշխարհակալութիւններէն՝ իրեն օգնական անուանելու համար. և զրկեց զանիկայ Հռոմ, ուր մեր Սուրբը տեղեկութիւններ տուաւ Շապլէի դարձերուն մասին. հիանալի կերպով պատասխանեց քննութեան միջոցին իրեն եղած հարցումներուն. ամենէն սիրալիր ընդունելութիւն գտաւ. և ընդունեցաւ Նիկայոյի Եպիսկոպոսի և Ճինեվրայի օգնական-Եպիսկոպոսի տիտղոսը:

Իր Եպիսկոպոսին քով դառնալուն պէս Թեմին պէտքերը և ժէքս գաւառին մէջ կաթողիկէ կրօնքը հաստատելու հարկը ստիպեցին զինքը երթալու Բարեգ ուր իր համբաւը իրմէ առաջ գացած էր: Հոն ամենուն յորդ գովեստներուն առարկայ եղաւ. յարարութեան մէջ մտաւ նոյն մայրաքաղաքին ամենէն սրբակեաց անձերուն հետ: Շատ անգամ առիթ ունեցաւ խօսելու Տիկին Ագարիի հետ, որ Ֆրանսայի մէջ կարմեղեանց հիմնադիրը եղաւ: Բարեպաշտոն Պէրիւն ալ որ ապա Հռոմէական Եկեղեցւոյ արժանաւոր կարգիւնայինն էին եղաւ, իրեն հետ խորհրդակցեցաւ Օռաթուարի Բահանայից Միաբանութիւնը հաստատելու մասին. Եւ Հենրիկոս Դ. Թագաւորը, համոզուած ըլլալով այս Աստուծոյ Գառաւոր արժանապատուութեան վրայ, ընծայեց անոր բարերարութիւններ, թոյլալնէր և նոյն իսկ Բարեգի Եպիսկոպոսութիւնը՝ զինքը Ֆրանսայի մէջ պահելու համար: Բայց այս իմաստուն Եկեղեցականը չուզեց թողնուլ Աստուծոյ իրեն յանձնած Եկեղեցին՝ ըսելով թէ, անոր ազգաստութիւնը երբէք պատճառ մը չի կրնար ըլլալ զայն լքելու:

Իր եկեղեցին վերադառնալուն՝ լսեց իր Նախորդին մեռնիլը. կրթութեամբ մը պատրաստուեցաւ իր օծման, և այս առիթը արարողութեան մէջ ընդունեցաւ քահանայութեան լրուսին հետ Ս. Հոգւոյն լեռնման ալ:

(Շարունակելի)

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ „ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՒՆԷ“ ԳՐԲԷՆ

Գրիգ. Ս.—Դ. Թ.— Հնազանդութեան ու հրապարակութեան վրայ:

(Շար.)

Յոյժ մեծ բան է հնազանդութեան մէջ մնալ, առաջնորդի մը ուղղութեան օսկ ապրիլ, եւ ըլլալ օրէնսման:

Շատ աւելի ապահով է հպատակ ըլլալ, քան առաջնորդ:

Շատերն ի հնազանդութեան են՝ աւելի առ հարկի քան ի սիրոյ. այսպիսիները մեղութիւն կը կրեն եւ դիւրաւ կը օրհնեն:

Բնաւ մօտիկ ազատւորին պիտի յօսանան, երբ ընտրով արցիւ Աստուծոյ համար չհպատակին:

Վազի՛ հոս կամ հոն. պիտի չգտնես հազարս, երբ ոչ առաջնորդի վարչութեան օսկ խնամք հպատակութեան մէջ:

Տեղերու երեսակայութիւնն ու փոփոխութիւնը շատերը խաբեց:

Գ Ի Տ Ա Վ Ա Ն

ՍԱԽԱՌՆԱԿԸ (*)

(Շար. եւ վերջ)


Օդագնացութեան կազմածները ամենէն աւելի պատերազմական արուեստին զարգացման գործածուած են։ Ասոնցմով կը լրտեսուի թշնամի բանակը, կը կանոնաւորուի հրետաձգութիւնը (tir de l'artillerie), կը գիւրանայ ռմբակոծումը։ Ասոնց վրայ կը գտնուի նաեւ անթել հեռագիր, որով օդագնացը առանց գետին իջնելու կրնայ հաղորդել իր զինւորութեանց արդիւնքը։ Ամէն մեծ տէրութիւն միլիոններ կը ծախսէ սաւառնակներու և օդանաւերու ղեկավարելի օդապարիկներու (dirigeables) համար։

Անգղիոյ պատերազմական վարչութիւնը 100է աւելի զինուորական սաւառնակ ունի արդէն, և մեծ եւամուկ շինելու հետ է ջրասաւառնակներ, որոնք թէ օդին մէջ և թէ ջուրի վրայ կրնան սաւառնիլ, պաշտպանելով մարտանաւերը, հսկելով ծովափին վրայ, և թշնամի նաւեր զարնելով։

Գերմանիա՝ իր զինուորական նոր և հրակայական պատրաստութեանց մէջ, լայն և ընդարձակ տեղ մը կու տայ իր օդային տորմիդին։ Ամէն ճիգ կը թափէ, կատարելագործելու թէ՛ սաւառնորդութիւնը, որուն մէջ Ֆրանսայէն հոտ է, և թէ՛ օդանաւորդութիւնը որուն մէջ գերիվերոյ է Ֆրանսայէն։ այնպէս որ եթէ յանկարծ պատերազմ մը բացուի այս երկու պետութեանց միջեւ և օդային արշաւանքները սկսին, Ֆրանսա վտանգի մէջ պիտի գտնուի ջախջախուելու թշնամիին՝ որակով ու քանակով գերազանց ուժին առջեւ։ Որովհետեւ օդանաւերը, սաւառնակներէն աւելի կրնան մեծաքանակ ռազմամթերք և շատ զինուորներ կրել, և անոնց մէջէն աւելի դիւրութեամբ և ուղղութեամբ կը կատարուին ռմբակոծութիւնք։ Գերման օդանաւերը կը պարունակեն օդային թնդանօթներէ, ռմբակէցներէ զատ, լուսանկարչութեան

գործիք, առատ պարէն, նաւապետի խուց, լուացարան, եւայլն։ Օդանաւը սաւառնակի վրայ այս առաւելութիւնն ալ ունի որ ձայն չի հաներ։ քանի որ զինք վեր բռնողը իր մէջ լեցուած կազն է։ մինչդեռ սաւառնակը մղողը իր շարժակն է, որ անդադար կը ճոնչէ։ Ուստի օդանաւը կրնայ գիշերանց մտնել թշնամիի երկիրը առանց իմացուելու և առանց տեսնուելու, քանի որ 1000 մէդրէ վեր չ'երեւար, և երբ թշնամի մարտանաւին կամ մթերանոցին վրայ հասնի, կրնայ լռելեայն վար իջնել մինչեւ 1000 մէդր նետել իր ուժանակները և իսկոյն չուել երթալ։ Այս տեսակ գերմանական օդանաւ մըն էր որ անցեալները հովին քմահաճոյքին զոհ եղած, գրեաց Ֆրանսական հողին վրայ Լիւնէվիլ իջաւ և իւր գաղտնիքը ակամայ մատնեց անհամբեր զինքը դիտելու եկող Ֆրանսացի մամնագէտներուն։ Այս օդանաւին մէջ կային հինգ սպայ և եօթը մեքենավար՝ ամէն նոր կազմածներով։— Ինչպէս որ Գերմանիա իր դրացիներուն համար գաղտնիքներ կը պատրաստէ, անոնք ալ իրենց գաղտնիքներն ունին։ Զինուորական Տէրութեանց իւրաքանչիւրը ամէն ջանք կ'ընէ օդային նաւախումբերու կազմութեան համար, որոնք բոլորովին նոր երեւոյթ մը պիտի տան ապագայի պատերազմներուն։

Սաւառնորդութեան և օդանաւորդութեան վերջնական յաջողութիւնը կախում ունի լուծումէն երկու խնդիրներու որոնց առաջինն է օդէն թեթեւ մարմին մը՝ օդին մէջ անշարժ կեցնել։ երկրորդն է, օդէն ծանր մարմին մը՝ ինքնավարօրէն օդին մէջ հաստատուն լռնել։ Հիմա այս երկու նպատակին անդադար կը ձգտին ջանքերը՝ այս նոր գիւտին սիրահար գիտուններուն, արուեստաւորներուն։ օդանաւորդութեան և սաւառնորդութեան քաջարի դիւցազններուն։



(*) Տես թիւ 90, էջ 235.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ (*)

Մ Ո Ւ Գ Ա Տ Տ Է Մ Է

Ֆիքրի պէշերին տիգգաթընը տալէթ ի-
տէն վէ հալլի զայէթ միւհիմմ օլան մէսէլէ-
լէր իչինտէ՝ Յիսուս Քրիստոսըն սահիհ թա-
պիաթընըն նէ օլտուղը մէսէլէսի էն երեք-
սէյի տիր։ — Աճէպա, պուհտան օն սէքիզ
աարտան պիր ազ ֆազլա էվլէլ, քիւչիւք
պիր տիյարտա, չօզ մէշհուր օլմայան պիր
ճէմաաթ արասընտա զուհուր էտիպտէ, տիւն-
եանըն իւզէրինէ պու գատար միւզթէտիր
պիր էլ օլան խարիզ իւլ առէ զաթ քիմ տիր.
էօյլէ պիր զաթ քի պիւթիւն ճէմիյէթի պէ-
շէրիյէ իչիւն հազըզի վէ միւքէմէլ մէզնէ-
պին էպէտի սալթանաթընը թէէսիս իթմիշ
տիր, գուտրէթլիլէր արասընտա էն թէմիզի.
էն թէմիզլէր միյանընտա էն գուտրէթլիսի
օլան պու զաթ հորուլմըշ, եարըլմըշ էլլէ-
րիյլէ իմբէրաթօրլուզլարը թէմէլլէրինտէն
սարասպիլմիշ վէ սարըլարըն մէճրասընը տէ-
շիշէպիլմիշ տիր։ էօյլէ իսէ քիմ տիր պու
զաթ։ Պիր Ալլա՛հ մը տըր։ Եօզսա ինսա՛ն մը

Մ. Խ. Ինչպէս կանխաւ խոստացած էինք և Գիր.
թարգմանիչը բարեհաճած էր ստանձնել, այս թիւով
կը սկսինք Յիսուս Քրիստոսի կեանքի տիւրքսը կրող
հիանալի գրքային թրքերէն լեզուաւ թարգմանու-
թիւնը ներկայացնել մեր ընթերցողներուն։ Այս գիրքը
կը բերէ ի յայտ Տեառն Մերոյ երկրպագելի արտա-
քին կատարելութիւնները, որոնցմէ աստիճանաբար
կ'ամբառնայ նկատելու և հետեցնելու նաեւ Անոր
Աստուածութիւնը։ Նիւթին համառօտի՝ կարելի ե-
ղածին չափ գիւրահասկանալի և սահուն ոճով գր-
ուած է։ Վստահ ենք որ մեծամեծ օգուտներ պիտի
ընձեռէ ամենուն՝ նորոգելու համար իրենց պատգած
հոգիներուն մէջ ամենասիրելի Փրկչին և հոգւոց փե-
սային անմահական դէմքը և կենդանարար սէրը, մա-
նաւանդ հիմա որ Գիթիսի իր մարդկային արքանակ-
ներով կը ճգնի սրտերէն, մտքերէն յիշատակներէն
հանել ջնջել զՏէր Յիսուս, զՍէր Անուն Յիսուս...
Ճղճիմ արարածներու ձեռքով մարել Յաւիտենական
Լոյսը, զՏէր Յիսուս... Որոյ թագաւորութեան ոչ գոյ
վախճան։

Յիսուս Քրիստոս և Գաթօլիք Մէզնէպի էսապարըն
այսուհետեւ փոխն ի փոխ պիտի հրատարակենք։

տըր։ Աճէպա թապիաթըն պիր խօշ ճիւլէսի
վէ եախօտ ինսան ճիւսինին նիւմուհէլիք պիր
միւմէսսիլինի պուլմագ իւզրէ սարֆ իթալի
խարիզ իւլ առէ սայ ու իգտամըն պիր նէթի-
ճէսի մի տիր։ Օնուն բուհընըն կիւզէլլիսի.
օնտաքի ճէմալըն էմալսըզլըղը, ֆիքրինին
երեքսէլլիյի, գալպինին պէօյիւքլիւլիւ, թա-
պիաթըն ֆէվզինտէ օլան էմբիւնիւն հատ-
սըզ հիսապսըզ սէմէրէլէրի, աճէպա իսթէր
իսթէմէզ ֆիքրիմիզի օնտա առէթա ինսան-
տան ֆարզլը պիր շէյ կէօրմէյէ սէվզ իթմէզ
մի։ Յիսուսըն ինսանլըղը բէրտէսի արգա-
սընտան կէօրիւլէն պիզզաթ Ալլան տըր, տէ-
նիլէճէք օլսա, աճէպա քիւսթախլըզ մը ի-
տիւմիշ օլուր, թապիաթըն մէվհիպէլէրիյլէ
միւմթազ օլան քիմնէլէրէ բասթ կէլտիլմիզ-
տէ, սատէճէ օնլարըն սիմալարընը կէօրմէք-
լէ, կէօզլէրինէ, տուտազլարընա եալընըզ
պիր նազար աթֆ իթմէքլէ, սէօզլէրինի ի-
շիթմէքլէ, «Իշթէ պէօյիւք պիր բուհ սահի-
պի, նէճապէթ, լութֆ վէ տէհայա մալիք
պիր քիմնէ» տէտիլմիզ կիպի։ «Պուհտա
Ալլանլըզ վար տըր» տէմէք իչիւն տա Յի-
սուսը կէօրմէք քիսաֆի տիր։

Իշթէ մէսէլէ պու տըր։ Պիր վագըթ Յի-
սուսը պու եօլտա թէտզըզ իթմէզլէրտի.
եալընըզ խէլապքեարըն ինսանլըղընըն քէմա-
լէթինի անճազ նազարը իթիպարա ալըրլար-
տը վէ թափօր տալընտա օլտուղը կիպի, օ-
նուն ինսանլըղը Ալլանլըղընըն չիւլէ վէ ին-
թիշամը արասընտա զայիպ օլուրտը։

Պու կիւն պիզ պաշպա պիր եօլ թաագիպ
իտիյօրուզ։ Էյ Յիսուս, նէր կիւն եէնի պիր
տիլիլիք իքթիսապ իտէն ճազիպէլէրին՝ պիզ
սէնին թաթլը վէ կիւզէլ ինսանլըղընա ճէլպ
իտիյօր։ Պիզ՝ պիզիմ իչիւն տէլինմիշ օլան
էլլէրինէ վէ ալագլարընա, շէֆագաթ չիւլէ-
լէրիյլէ բարլայան ալընա, պիզէ տօղրու
պու գատար պէօյիւք պիր մէհապպէթ բէր-
վէրտէ իտէն գալպինէ պագլօյօր, վէ պու
սուրէթլէ էվլէլ էմիրտէ չիւպնէլէնմէյէ պաշ-
լայօր, միւթէազըպէն նիմ աշիքեար պիր
հալտէ կէօրիւյօր, նիհայէթ Ալլանլըղընը
քէշֆ իտիպ օնա սէճտա էլլէյօրուզ։

Էվլէլճէ կիտիլէն եօլ պէքքի տահա երեք-

սէք իտի . ֆագաթ պու տահա թաթը տրը : Ասորմըզ նազարիաթտան զիյատէ ֆիլիաթա մէֆթուն օլուպ , թարղը թէտղը խուսուսընտա դայէթ հէվէսքեար պուլունտըղընտան , Բրիտտուն ինսանլըղընտան օնուն Ալլալըղընտա տողրու իլէրիլէյէն իսպաթլարը վէ տէլիլէրի տահա զիյատէ պիր մէմնուսնիլէթէ գապուլ իտէր . պինաէն ալէյս պու թարիգ ասորմըզ տահա մուվաֆըգ կէլէսպիլը : Հէմ պու թարիգի , ալթիւսթ օլունը օլան շահիրտինէ , « Սէն իրայէ իթմէտին մի , եա' Յիսուս . Թո'վմաս , բարմաղընը ալագլարըմն վէ էլլէրիմն եարալարընա գօ , պա խուսուս երէլէյիմն եարալարընա գօյտա , բէճա իտէրիմ ինսանաղըգ իթմէ » . « Եւ մի' լինիր տնիաւատ » (Յովհ . Ի . 27) պույուրմաւտն մը : Թովմաս պու էմրէ գարլը գօյամատը . ինսանլըղընը կէօրտիւ վէ Ալլալըղընը իգլար էլլէտի . « Ետես զմարգն' և խոստովան եղեւ թէ Աստուած է » : (Ս . Օգ .) :

(Շարունակելի)

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀԱՌՄ ԵՒ ԿԱՅՈՂՆԻԿԷ ԱՇԽԱՐՀ

Ս . Քաջանոյապետը Մայիս 7ին ընդունեցաւ Յըրանսայէն դարձող Վսեմ . Վանուգէլի Կարգինալը , Կարգինալը Պիոս Ժ . Ի . յանձնեց աշխատելը , գոր Ն . Սրբութեան Ուղղութեւն էր Մ . Գալոն . Ս . Վ . Պաւլաճեցւոյն Կաճառներուն Ընդհ . Նախագահը :

Ս . Քաջանոյապետը տրգէն նախընթաց օրը ըստացած էր Կարգինալ Ամէրի մէկ հոյակապ նամք : Կը ուր Բարիգի Արքեպիսկոպոսը շնորհակալ կ'ըլլայ Ն . Սրբութեան որ Պատուիրակ-Կարգինալ մը զրկելէ զատ հաճեր էր նաեւ Յըրանսայի ուղղել տնքան սիրտիր թօսքեր . և կ'ընծայէ Բարիգի ժողովուրդին կրօնասիրութեան և Ս . Աթոռին նկատմամբ ունեցած . անձուկ յարումին հաւատարմքը :

Վսեմ . Վանուգէլի Կարգինալը մանրամասնօրէն Ս . Քաջանոյապետին առջեւ պարզեց Բարիգի կրօնական հանդէսներուն անպատեղի չքեղութիւնը . և Յըրանսայի ժողովուրդին ցոյց տուած խանդավառ ու սրտաշարժ բարեպաշտութիւնը և հաստատուն հաւատքը :

Ս . Աթոռը իր բարձր հաճութիւնը յայտնեց Պորտոյի Արքեպիսկոպոս Կարգինալ Անտրիէօյի առթիւ անոր Ապրիլ 11ին ըրած Յայտարարութեան , որով Ն . Վսեմ . Տէրութիւնը իր կղերին և ժողովուր-

դին կը հրամայէր չբաժանորդագրուել և բաժանորդագրուած չմնալ Bulletin de la Semaine և չընթեռնուլ դայն' բարոյական աստուածաբանութեան թղթ տուած պարագաներէն դուրս : Յըրանսայի Եպիսկոպոսներն ալ պաշտօնապէս կը հրատարակեն հետըջեալէ Պորտոյի Արքեպիսկոպոսին նոյն յայտարարութիւնը :

Քաջանոյապետը , ինչպէս նաեւ ամբողջ Յըրանսայի մէջ , Կրօնական և Հայրենասիրական խանդավառ հանդէսներով կատարուեցաւ տօնը Ժան-Տ'Արքի : Մայիս 4ին « մարզ » Բարիգի փողոցները , շէնքերը դրօշակներով դրասանգներով զարդարուած էին : Եկեղեցիները խուռն և հոծ բազմութեամբ զեղուռն էին : Ժամը 10ին սկսաւ շարժիլ երեսուն հազար հագինոց դրօշաբարձ թափար մը , բաղկացած ամէն դասակարգի , ամէն ընկերութեան և դպրոցի ներկայացուցիչ խումբերէ , որոնց ամէն մէկը իր սեփական մեծադիր ծագկապակին կամ ծագկախաշին ետեւէն : Կ'ընթանար պատկառաւորաւ : Չորս հարիւր երիտասարդ , սպիտակ և կապոյտ բաղկացներով , կը հսկեն կարգապահութեան : Թափորը կ'երթայ ընծայելու իր յորդանքն ու նուէրները Ժան-տ'Արքի ալ եւ այլ տեղեր զետեղուած արձաններուն : Պատշգամներէն ցնծութեան տաղաղակներ , մեծաշաւիկ , ծափեր օդը կը թնդացնեն ու կ'երկարեն , կը ստատկանան անընդհատ :

Սրտայոյզ վայելչութեամբ և յարգական ողբոյնով կ'անցնին խումբերը Ժան-տ'Արքի ամէն մէկ արձանին առջեւէն , և կ'ընծայեն իրենց պատկերը : Հայրենիքի Սրբութիւն . արձանը կը թաղուի ծագկներու մէջ . ամէն մէկ պատկի ընծայուելուն' բիւրաւոր ձայներ մեծադրորդ կեցցէներ կը կրկնեն . Կեցցէ' Ժան-տ'Արք , կեցցէ' Յըրանսա , յարգանք Ժան-տ'Արքի :

Ս . Մօրիս Պարէս սքանչելի բանախօսութեամբ մը դրուատեց Որէւանի Կոյսը , Հայրենիքի Սրբութիւն :

Իրիկունը քաղաքին շատ մը շէնքերը լուսազարդուած էին : Մանրագրի Սիրտ-Յիսուսի Մայր-Եկեղեցին կանաչ , կարմիր և սպիտակ յորդ լոյսերով ողողուած , անրջային , խուսափուկ երեւոյթի մը պէս , կը ծփար գիւրդուան խորհրդաւոր մթութեան մէջ :

Տանկայէն կը ծանուցանեն 24 Ապրիլ թուականու թէ' Չինու Հանրապետութեան այժմեան Կախազհ Հուան-Եի-քայի ժայրը . Տիկին Տանկ , Բրիտանիական Կրօնքն ընդունելով մկրտուեր է : Իր էրինն ալ , որ Ալպէրտինի համադարմին մէջ միջազգային իրաւարանութեան ճիւղին մէջ Վարդապետութեան աստիճան առած է , նոյնպէս մկրտուեր է իր երկու զաւակներով : Տիկին Տանկ ինքզինքը նուիրած է ամբողջովին : Չինու կանացի սեւին դաստիարակութեան զարգացմանը :

Ս . Եկեղեցւոյ ազատութեան Կոստանդինեան ԺՁ . դարադարձին և այս առթիւ Ս . Քաջանոյապետին շնորհած Յորէյեան երողութեան առթիւ աշխարհիս ամէն կողմէն բազմութիւն ուխտաւորաց , խումբեր կը շարունակեն գալ Հուան Գաղղիայէն

Գերմանիայէն, Հոլանտայէն, Անգղիայէն, Սպանիայէն, Նոյն իսկ Ամերիկայէն և այլն, եկած են արգէն հազարաւոր հոգիներէ բաղկացած խումբեր, որոնք վատիկանու մէջ կ'ընդունուին Կարդինալ Մէրի տէլ-Վալի կողմանէ. և հանդիսաւոր թափօրներով կը կատարեն իրենց ջերմեւանդութիւնը Հռոմի հին Մայր-Եկեղեցիներուն և Գեանադամքաններուն մէջ. և յաւիտենական Քաղաքին մէջ ցոյց կու տան, հիանալի և զանազանիւ տեսարաններով, իրենց խորին հաւատքը նկատմամբ Ս. Եկեղեցւոյ և յարգանքը նկատմամբ Առաքելական Ս. Աթոռին Պետրոսի:

Է Զ Մ Ի Ա Մ Ն Ա Կ Ա Ն Ն Ա Յ Ե Ր

Մայիս 12ին՝ Ազգ. Վարչութեան խառն ժողովին կողմէ որոշուած պատուիրակութիւնը Պատրիարքին հետ ներկայացաւ Մեծ Եպարքոսին և մատոյց Հայաստանի և Կիլիկիոյ մէջ տիրող չարիքներուն և անապահովութեան մասին պատրաստուած յիշատակագիրը: Պատրիարքն ու պատուիրակութեան անդամները բերանացի ալ պարզեցին իրաց վիճակը: Մեծ Եպարքոսը շատ մը սիրայիւր և սրտապնդիչ խօսքերէ վերջ խոստացաւ հարկ եղած տնօրինութիւնները ընել յայտարարեց միանգամայն թէ՛ ասկից առաջ ներկայացող պատուիրակութեան ներքին Գործոց նախարարին կողմէ չընդունուիլը թիւրիմացութեան արդիւնք է:

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Կը յուսացուի որ Լոնտոնի մէջ հաշտութեան նախագիծերը մէկ քանի օրէն ստորագրուին: Պուլկարիս իր Լոնտոնի պեսպանին, Մ. Մաճարօֆի, Պաշտօն յանձնէր է հաշտութեան նախագիծերը ստորագրելու: Յունաստան եւս այս բանին համար լիազօր մը նշանակեր է:

Քարիզի ելեւմտական յանձնաժողովի բացումը ի մօտոյ տեղի պիտի ունենայ: Արդէն Մ. Թէօօփօֆէն զատ դաշնակիցներու բոլոր պատուիրակները Բարիզ հասած են. եւ կարգ մը նիստեր գումարած են, ուր չորս պետութիւններու յիշատակագիրները քննած և կատարեալ համաձայնութեամբ պատրաստած են պատերազմական տուգանքի և իրենց ինկած

հանրային պարտքի խնդիրներու ճշգրիտ մէկ ամփոփումը:

Շքոտրայի մեծ շուկան հրդեհի տրուած է: Չունկորեոն կառավարութեան կողմէ ամենախիստ քննութիւն կը կատարուի այս հրդեհին հեղինակները գտնելու համար: Տասուերկու կասկածելի հոգի ձերբակալուած են:

Պալատեան Դաշնակիցները Տէրութեանց վերջին ծանուցագրին տուած պատասխանուն մէջ կը յայտարարեն թէ կ'ընդունին դադրեցնել թշնամութիւնները և երթալ Լոնտոն՝ մասնակցելու հաշտութեան ժողովին. բայց կը յայտարարեն ալ թէ կը ցաւին որ Տէրութիւնք նկատի չեն առած վերապահումները, որ Դաշնակիցներուն համար կենսական խնդիրներու կը վերաբերէին:

Սիրամի մէջ կարգ մը յեղափոխականներ իւրօրութիւն հաներ են և սպաններ են մի քանի Ֆրանսացիներ և տեղացիներ:

Կը հուսատուի թէ՛ Անգղիա, Ֆրանսա, Ռուսիա և Գերմանիա պիտի դաշնակցին ընդդէմ Չինի, Ճարմին և Սիրամի, այդ երկիրներուն մէջ իրենց հրպատակները պաշտպանելու համար:

Սպանիոյ երիտասարդ Թագաւորը, Ալֆոնսօ Ժ.Գ. արտակարգ համակրութեան և մեղմութեան ցոյցերով ընդունուեցաւ Բուրիզի մէջ Ֆրանսական կառավարութեան կողմէ: Ի պատիւ իրեն մեծ հանդէսներ կատարուեցան: Ն. Վեհափառութիւնը ներկայ եղաւ զինուորական հրահանգներու և ձիարշաւի և յայտնեց իր խանդավառ հիացումը նկատմամբ Ֆրանսական զինուորաց զիրազանց կրթութեան: Կը յուսացուի թէ Ալֆոնսօ Ժ.Գ. ի այս այցելութիւնը միջազգային շատ շահեկան արդիւնքներ պիտի ունենայ:

Ալֆոնսօ Ժ.Գ. Մ. Բուանդարէի տուաւ Ոսկեգեղձի (La Toison d'or) կարգին պատուատիճանը: Յեղափոխականները և անխիստականները ուղիցին ցոյց մը ընել սպանիական Դիսպանատան առջեւ. բայց շնորհիւ կառավարութեան աշխուրջ հակողութեան չյաջողեցան, և ամսթապարտ խայտառակուեցան:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Դեպքեր եւ սկզբունքներ	305
Մայրայի Ս. Հաղորդութեան համաժողովը	308
Հէլէքը ինքիմայիլէին ալիլ վասիթասը իլէ քերագգըր	310
Ֆրէսթիֆ Օգանմի հարիւրամեակը	312
Ս. Հաղորդութեան առջեւ հաւատք, յուսոյ եւ սիրոյ ներգործութիւններ	314
Օրմանեանի «Հայոց Եկեղեցի» գիրքը	314
Եօթնեակ Քրիստոսէի	316
Սաւառնակը	317
Յիսուս Քրիստոս	318
Տեղեկագրական	319

ԱՐՏՈՆԱՏԷՐ

ՅՈՎԸ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՈՐԷՆ-ԽՄԱՆԴԱՊԵՏ

ԳԵՐՈՐ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՄԵԱՆ

Տպագր. Կ. Մեծագանգ Շաքարաբերքի, Քերա, Պայրամ փողոց բիւ ծ, Կ. Պոլիս

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Թուրքոյ համար, տարեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20.—
մէկ քիւ՝ 1 դհկ.:— Արտասահման՝ տար. ժր. 10. վեցամս. 5.—Վհարմունք կանխիկ են:

ՀԱՅԵ.— Կարողիկէ Արձագանգ, Բերա, 5 Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ.— 1.—Արձագանգ կը նրաստակուի Շաքաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատեհաւ կամ նշանութեամբ նրաստակել իրեն զրկուած ո եւ է յօդուած: 3.—Կեղծանունով զրկուած յօդուածներու հետքնակը կը պարտի իւր խական անունը ծանուցանել խմբագրապետին: 4.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած քլլան քուղթին մէկ կողմը միայն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրաժեշտ երկու դանեկանի նամակադրո՞ւմ ի միասին զրկել:

ՏՊԱՐԱՆ Կարողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայնի նոյն եւ ի վիճակի է որ եւ իցէ տպագրական գործոց համար: Կը սպուին ամէն տեսակ ծանուցմունք, գիրքեր, տետրեր, հրաւիրագիրներ, բարդեր, բարդ-ատրէաներ, մանագրներ, եւն., եւն.: Գիները ամամբողջի կերպով տժան են: Գեղեցկագիտական նաւակի եւ տպագրական մատրութեան կողմանէ յաճախողները անտարակոյս զոն պիտի մնան:

ԿԸ ԾԱՆՈՒԹԻ «Տարեկան Սկզբունք Բրիտանական Վարդապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Գին, ամուր թղթակազմը 2 դհկն.:
